- 1.1. «ՇԻՏԱԿ» ՀԱՆՐԱՅԻՆ ՕԳՈՒՏ ՀԵՏԱՊՆԴՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա, հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորման տեսակ է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.2. Կազմակերպությունը գործում է օրինականության, կամավորության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման, անդամության կամավորության, ղեկավարման կոլեգիալականության և հրապարակայության սկզբունքներով:
- 1.3. Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ քաղաքական հոսանքի:
- 1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան փող., տուն 40, հեռ. 51-27-55:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են օրենքով սահմանված կարգով՝
 - Արդի հանրօգուտ իրավաբանական թեմաների վերաբերյալ հասարակության զգոնության բարձրացում՝ դասախոսությունների, սեմինարների, կոր սեղանների և հասարակական այլ միջոցառումների օգնությամբ.
 - Երիտասարդ իրավաբանների և իրավագիտության այլ մասնագետների շարունակական վերապատրաստում՝ սեմինարների, տպագիր նյութերի, իրավաբանական թեմաների մեկնաբանման, իրավաբանական ամսագրերում հոդվածների, այլ հրապարակումների, կինոժապավենների ու տեսաֆիլմերի միջոցով.
 - Ոչ առևտրային իրավունքի ոլորտում հետազոտման մասնագիտական առաջընթացի վերաբերյալ իրավաբան ուսանողների համար ոչ առևտրային իրավունքի դասընթացների հովանավորում.
 - Հակակոռուպցիոն գործընթացների և իրավաբանական նախաձեռնությունների սատարում և ուսուցում.
 - Կառավարման ոլորտում օրենքի գերակայության և ժողովրդավարության սկզբունքների տարածում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

- 3.1. Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ ՀՀ պետական ռեգիստրի կողմից Կազմակերպության պետական գրանցման պահից:
- 3.2. Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ՝
 - ա) ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կտր կնիք, որոշմ , հաշվարկային հաշիվ բանկում՝ թե ՀՀ և թե օտարերկրյա արժույթով:
 - բ) իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:
- 3.3. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:
- 3.4. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- ա) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.
- բ) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ հասարակական կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում.
- գ) համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, Ընդհանուր շահեր ներկայացնելու և, պաշտպանելու նպատակով, այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ, կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.
- դ) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.
- ե) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք.
- զ) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ.
- է) օտարել, կամ վարձակալության և օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ գույք,
- ը) իրենց նուրյան կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում վոլյանտո միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում արտարժույթով.
- թ) ունենալ միջոցներ արտարժույթով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել կամ ստանալ և ինքնուրույն տնօրինել.
- ժ) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, իր անդամներին գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
Կազմակերպություն իրավունք ունի իրականացնել իր կանոնադրությանը չհակասող և օրենքով չարգելված այլ գործունեություն.
- ի) կազմակերպել մրցաշարեր, ուսուցողական սեմինարներ, այդ թվում նաև միջազգային,
- յ) հիմնադրել լրատվության միջոցներ,
- խ) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպությունը պարտավոր է՝

- 4.1. Ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան յոթ օրացույցային օրվա ընթացքում, նրան հնարավորության տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը:
- 4.2. Օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում:
- 4.3. Վարել իր անդամների հաշվառումը:
- 4.4. Իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը, ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը:
- 4.5. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ:
- 4.6. ՀՀ արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի պատճանաբանված պահանջով ողջամիտ ժամկետում, նրան տրամադրել

Կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, բույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու Կազմակերպության ժողովին:

- 4.7. Առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:
- 4.8. Օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով:
- 5.2. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Կազմակերպության պարտավորությունների համար:
- 5.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես-որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում կազմակերպության պարտավորությունների համար: Եթե Կազմակերպությունն իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:
- 5.4. Պետությունը ապահովում է Կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության գործունեությանը միջամտելն արգելվում է, քացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 5.5. Կազմակերպությանը հասցված վնասը, որը հետևանք է պետական կամ այլ մարմինների, կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից Կազմակերպության իրավունքների խախտման, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, ենթակա է փոխհատուցման այդ մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.6. Անձի անդամակցությունը Կազմակերպությանը չի կարող հանդիսանալ նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք, պետական մարմիններում պաշտոն զբաղեցնելու պայման կամ արգելք:

Արգելվում է Կազմակերպության անդամությունը նշելու պահանջը:

6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱՈՒԻ ԿԱՐԳԸ

- 6.1. Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձինք Կազմակերպության նախագահության (այսուհետև՝ նախագահություն) պետք է ներկայացնեն գրավոր դիմում՝ մուծելով մուտքի վճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում է նախագահության՝ կողմից:
- 6.2. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Կազմակերպության նախագահությունը: Կազմակերպության անդամության մեջ ընդունելու մասին դիմումի մերժումը զանգատարկման ենթակա չէ:
- 6.3. Կազմակերպության անդամները մուծում են անդամավճար, որի չափն ու վճարման կարգը սահմանվում է Կազմակերպության նախագահության կողմից:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- ա) ներկա գտնվել Կազմակերպության ժողովին, եթե վերջինս անցկացվում է Կազմակերպության անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել,
 - բ) ծանոթանալ Կազմակերպության մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները (պատճենների տրատալման համար զանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը),
 - գ) Կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել Կազմակերպության վերադաս մարմիններ՝ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով,
 - դ) Կազմակերպության մարմնի (այդ թվում՝ բարձրագույն մարմնի) որոշումը, որն ընդունվել է օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ, կամ ոտնահարել է Կազմակերպության կամ Կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:
- 7.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- ա) հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման համար,
 - բ) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները, դեկլարար մարմինների որոշումները,
 - գ) աջակցել Կազմակերպության անդամության համալրմանը,
 - դ) մոծել մուտքի վճար և անդամավճար,
 - ե) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները: Կազմակերպության կանոնադրության, կարգապահական կանոնները խախտող Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կամ նախագահության կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ ընդհուպ Կազմակերպության անդամությունից հեռացումը:
- 7.3. Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին Կազմակերպության նախագահության որոշումը կարող է զանգատարկվել Կազմակերպության Ընդհանուր ժողովին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

- 8.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը Ընդհանուր ժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:
- 8.2. Կազմակերպության Ընդհանուր ժողով հրավիրվում է յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ Կազմակերպության անդամների առնվազն 1/3 -ի նախաձեռնությամբ: Նախագահության կողմից ժողովի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները տեղյակ են պահվում ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ: Կազմակերպության անդամների 1/3 -ի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում, հրավիրվում է տեղի է ունենում Կազմակերպության արտահերթ ժողով:
- 8.3. Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- ա) Կազմակերպության կանոնադրության ընդունումը, նրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը.
 - բ) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը.
 - գ) երկու տարի ժամկետով Կազմակերպության նախագահության, նախագահի, փոխնախագահի, պատասխանատու քարտուղարի ընտրումը և նաև կանչումը և կազմի փոփոխումը.
 - դ) երկու տարի ժամկետով վերահսկիչ հանձնաժողովի (վերահսկիչի) անդամների ընտրումը եւս կանչումը և կազմի փոփոխումը.
 - ե) Կազմակերպության լուծարումն ու վերակազմակերպումը:
Սույն կետով սահմանված հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր մասնակիցների երկու երրորդի մեծամասնությամբ: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
- 8.4. Կազմակերպության Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից ավելին:
- 8.5. Կազմակերպության նախագահությունն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Նա իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ:
Նախագահության անդամների մեկ երրորդի կամ նախագահի պահանջով կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:
- 8.6. Նախագահությունը՝
- ա) հանդիսանում է Կազմակերպության ղեկավար մարմինը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
 - բ) առաջարկություններ է ներկայացնում Կազմակերպության Ընդհանուր ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
 - գ) ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում է անդամությունից,
 - դ) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.
 - ե) վարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում.
 - զ) սահմանում է Կազմակերպության կարգապահական կանոնները և հրահանգները.
 - է) սահմանում է Կազմակերպության անդամների կողմից անդամավճարների մուծման կարգը, չափերը և ձևերը.
 - ը) ստեղծում ու լուծարում է Կազմակերպության կառուցվածքային միավորները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.
 - թ) ընդունում է որոշումներ Կազմակերպության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին.
 - ժ) իրավասու է որոշումներ ընդունել գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ.
 - ի) իրավունք ունի քննել ու լուծել ցանկացած հարց, բացառությամբ Կազմակերպության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:
- 8.7. Կազմակերպության նախագահությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են նախագահության անդամների կեսից ավելին: Նախագահության որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռող է:
- 8.8. Կազմակերպության նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Նա ի պաշտոնն հանդիսանում է նախագահության

նախագահը:

8.9. Կազմակերպության նախագահը՝

- իրականացնում է կազմակերպության ընթացիկ ղեկավարումը.
- իրավիքում է նախագահության նիստեր, կողողինացնում է նախագահության և վերահսկիչ հանձնաժողովի գործունեությունը.
- կազմակերպության նախագահն իր պաշտոնը ստանձնում է նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը.՝
- իր կողմից իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է դրա շահերը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները, կնքում է պայմանագրեր, այդ թվում և աշխատանքային, Կազմակերպության վարձու աշխատողների համար իրականացնում է գործատուի ֆունկցիաներ, տալիս է հաշիվներ, հաստատում է հաստիքներ, արձակում է հրամաններ, վարձու աշխատողներին տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ:

- Կազմակերպության փոխնախագահը (փոխնախագահները), որը միաժամանակ նախագահության փոխնախագահն է, ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ երկու տարով և նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան՝ նախագահի կողմից տրված լիազորագրի հիման վրա. կողողինացնում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների աշխատանքները:

- Կազմակերպության պատասխանատու քարտուղարը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից 2 տարի ժամկետով. կողողինացնում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների աշխատանքները, կազմակերպում է Կազմակերպության գործավարությունը, Կազմակերպության անդամագրության աշխատանքները, տնօրինում է Կազմակերպության արխիվը, կատարում է Կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորություններ: Իրենց չարդարացված Կազմակերպության բոլոր ընտրովի պաշտոնատար անձինք կարող են ժամկետից շուտ ետ կանչվել իրենց ընտրողների կողմից:

Կազմակերպության նախագահը և ղեկավար մարմնում ընդգրկված այլ անձինք Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել, եթե նրանց մշտական աշխատանքի վայրը համարվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության ղեկավար մարմնում ընդգրկված վերոհիշյալ անձանց վարձատրության չափը սահմանում է Կազմակերպության նախագահությունը:

8.10. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (կամ վերահսկիչը) ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից երկու տարի ժամանակով:

8.11. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Վերահսկիչը որոշումներ է ընդունում միանձնյա:

8.12. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը) իրավասու է՝

- ցանկացած ժամանակ անցկացնել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.
- ծանոթանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության մարմիններ.
- Կազմակերպության պաշտոնատար անձանցից, անդամներից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր և բանավոր տեղեկատվություն.
- իրականացնել Կազմակերպության կանոնադրությունից, կամ բարձրագույն մարմնի որոշումներից բխող այլ լիազորություններ:

8.13. Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Կազմակերպության Ընդհանուր ժողովին՝ Կազմակերպության գործունեության

- արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների մասին: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ կամ վերահսկիչ չեն կարող լինել նախագահության անդամները և նախագահը:
- 8.14. Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների անդամ կարող է դառնալ միայն 18 տարին լրացած անձը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ


- 9.1. Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակները և խնդիրներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:
- 9.2. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներն իրավաբանական անձ չեն, կարող են օգտվել գույքով իրենց ստեղծող Կազմակերպության կողմից և գործում են վերջիններիս կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:
- 9.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ հիմնադրելու իրավունք ունի Կազմակերպության նախագահությունը, որն էլ հաստատում է նրանց կանոնադրությունները:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՅՄԱՆ ԱԳՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ:


- 10.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:
- 10.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ՝ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
- Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի:
- 10.3. Կազմակերպության գույքի ստացման աղբյուրներ կարող են լինել՝
- Կազմակերպության անդամների անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները, նրա կողմից գույքի տիրապետելու, այն օգտագործելու, ինչպես նաև այլ գույքային իրավունքների փոխանցումը.
 - բանկային հիմնարկներից ստացված վարկերը.
 - դրամաշնորհները
 - բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները.
 - Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները.
 - ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքեր և աղբյուրներ:
- 10.4. Հայաստանի Հանրապետության տարածքում Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
- 10.5. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն օրենքով սահմանված կարգով:
- 10.6. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 11.1. Կազմակերպության վերակազմակերպումը իրականացվում է նրա Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
- Կազմակերպության Ընդհանուր ժողովը պարտավոր է Կազմակերպության



The Practicalities and Recommendations of NGO Registration



Տպագրված է «4» օրինակ, օրինակ N 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՇԻՏԱԿ»
ՀԱՆՐԱՅԻՆ ՕԳՈՒՏ ՀԵՏԱՊՆԴՈՎ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄՔ»
կազմակերպության
Ընդհանուր ժողովի որոշմամբ
«27»-----2004 թ.

Պետության կենտրոնական մարմնի
կողմից
Վրաստանի մասին ամիսը
ամսերիվը 25.06. 2003 թ.
Վրացման համարը 211. 171. 01884
Պետական գրանցման վկայականի
համարը 03 Ա 060796
թիվ 2-3 փոփոխությունը
գրանցված է «27»-----07-----2004 թ.
Պետական ռեգիստրի դեկլարացիայի



ՎԱՐԴԱՆՅԱՆ
(Handwritten signature)
Վ. ՍԱՐԳՍՅԱՆ
(Handwritten signature)



Կանոնադրության փոփոխություն

«Շ Ի Տ Ա Կ»
ՀԱՆՐԱՅԻՆ ՕԳՈՒՏ ՀԵՏԱՊՆԴՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄՔ»
ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության 1.5; կետը շարադրել ենուկայ կերպ

1.5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
Պուշկինի 51, բն. 13:

2004

(Handwritten signature)

հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակներով:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է « »

հասարակական կազմակերպություն:

1.6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ ք. ----- :

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության նպատակներն են օրենքով սահմանված կարգով՝

- նպաստել
- աջակցել

- 2.2. Կազմակերպության գործունեության առարկան է օրենքով սահմանված կարգով՝

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

3.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

4.2 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, խորհրդանիշով, որտեղ պատկերված է բռունցք արած երկու բազուկներ, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

4.3 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

4.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝

կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական

կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական

կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել

արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ,

ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա

պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

6 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Արձանագրություն թիվ 1

«՝ հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովի

« » _____ 2005թ

Հիմնադիր ժողովին մասնակցում էին կազմակերպության երկու հիմնադիրները՝ և :

Ժողովի նախագահ ընտրվեց
քարտուղար՝

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

«՞ հասարակական կազմակերպության» հիմնադրում:

«՞ հասարակական կազմակերպության» կանոնադրության հաստատում
2. Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների

ընտրություն

4. Կազմակերպության լիազորված անձի ընտրություն

Ելույթ ունեցավ, նա խոսեց Կազմակերպության ստեղծման անհրաժեշտության և նպատակահարմարության, այն նպատակների, խնդիրների և դրանց իրականացման ուղիների մասին, որոնք դրված են կազմակերպության առջև, այնուհետև հիմնադիրներին ներկայացրեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գրված կանոնադրության նախագիծը և առաջարկեց քննարկել ու հաստատել այն: Առաջարկություններ արվեցին կազմակերպության ղեկավար կազմի ընտրությունների համար:

Ելույթներից հետո հիմնադիր ժողովը միաձայն

Որոշեց՝

1. Հիմնադրել **«՞ հասարակական կազմակերպությունը»:**
2. Հաստատել կազմակերպության կանոնադրությունը:
3. Կազմակերպության նախագահ և լիազորված անձ ընտրել
4. Կազմակերպության մյուս մարմինների ընտրությունը թողնել բարձրագույն մարմնի առաջիկա նիստի քննարկմանը:
5. Դիմել ՀՀ պետական ռեգիստր կազմակերպության գրանցման համար:

Հիմնադիր ժողովի նախագահ՝
քարտուղար՝

ՀՀ պետական ռեգիստրի ղեկավար
պարոն

Գ.Սարգսյանին

«՞

հասարակական կազմակերպություն
նախագահ

Գիմու՛մ

Է՛Յ՛1նձձՍ՝ »Ս Օ»½ ըն»Յնձձ Է՛ ՆՍ՝ Յ՛ Ի՛ Ի՛ յն. ձ՛ ր. ն՝ Յձ»Է՛ Տ/

Ո՛Յ՛ Է՛ յն՝ Ի՛ Ի՛ Յ՛ Ի՛ յն՝ Ի՛ »նձձձձձձձձձձձձ:

Ի՛ Շձ Յձ»նձձ Ե՛ ՕՅձձձձ »Ս Ն՝ Ս՝ ձ՝ Ի՛ Է՛Է՛ Յ՛ ÷՛ Է՛ Է՛ ձձձ»նձ

1. Սձձձձձձ Ի՛ ձձ»Ի՛ Ի՛ Յ՛ Ի՛ ձձնձձձձ Յ՛ Յ՛1ձնն՝. Շնձ:
2. ՆՇՍՅ՛ Ի՛ Շնձ ձձձձձձ Շ՛ յն՝ Յ՛. նձձձձձձձձ:
3. ՆՇՍՅ՛ Ի՛ Շնձ»նձձ Յ՛ ՅձՅ՛. նձձձձ ձձձ Ի՛ x»ՅՅ»նձ:
4. Ի՛ ՅձՅ՛ Ի՛ նձձձձձձձձձ ձձնԷ՛ ընՇՅ՛ Ի՛:

Կազմակերպության նախագահ

« » ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ

ՑՈՒՑԱԿ

References

1. The Law of the Republic of Armenia on Public Organizations
2. Civil Code of Armenia
3. Armenia NGO Sector Assessment: A Comparative Study 2004.
4. Universal Declaration of Human Rights Article 20
5. International Pact on Social and Political Rights, Article 22, Part 1.
6. The European Convention on Human Rights, Rome 4 November
7. : <http://www.legaltext.ee/text/en/X1022K6.htm>.,

http://www.legaltext.ee/et/andmebaas/ava.asp?tyyp=SITE_ALL&ptyyp=I&m=000

[&query=database](#),

<http://www.legislationline.org/legislation.php?tid=2&lid=2364>
www.spyur.am